

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ  
ԿԱՅԱՑԱԾ՝ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան**  
**Մասնակցում էին՝**

**Խորհրդի անդամներ՝**

Ա. Դավթյան	ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Վ. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Ա. Գրիգորյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Երիցյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
Մ. Բաղալյան	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ
Ա. Թունյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ
Վ. Կարապետյան	«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Լ. Յագուբյան	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ի

## նախագահ

**Մասնակիցներ`**

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Տ. Սահակյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ա. Աֆրիկյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Վ. Պողոսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Թ. Ավետիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Գ. Պողոսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար
Հ. Քաղկեցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Վ. Դաբաղյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Հ. Այվազյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Ս. Հայրապետյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մամուլի քարտուղար
Ա. Նազարյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի ղեկավար

Ա. Գոմկցյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի փորձագետ
Ս. Ծատուրյան	ՎԶԵԲ-ի գրասենյակի փորձագետ
Տ. Սուքիասյան	ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակ, ծրագրերի ազգային պատասխանատու
Ա. Սարոկին	ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան

## 1. Ընթացիկ հաշվետվություն

-----  
(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

### **Քննարկումներից հետո որոշվեց՝**

#### 1) ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝

ա. անմիջական հսկողության ներքո պահել այն պետական մարմիններին (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության աննդամթերքի անվտանգության պետական ծառայություն), որոնք չեն հրապարակել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ստուգումների տարեկան ծրագիրը, որի արդյունքում չեն կարող իրականացնել պլանային ստուգումներ,

բ. Տեսչական բարեփոխումների խորհրդի քարտուղարության միջոցով մշակել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել ստուգումների տարեկան ծրագրի մշակման միասնական կարգը և դրա օրինակելի ձևը,

գ. Տեսչական բարեփոխումների խորհրդի քարտուղարության միջոցով մշակել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

2) առաջարկել ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի ղեկավար Ա. Նազարյանին «Մննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ դիտարկումը գրավոր ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

3) ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Ա. Բախչագույանին՝ ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի ներկայացուցիչների հետ համատեղ ևս մեկ անգամ քննարկման առարկա դարձնել սննդամթերքի անվտանգության գծով օրենսդրական փոփոխությունը.

4) ընդունել ի գիտություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար Գ. Պողոսյանի զեկուցումը:

2. Տվյալների էլեկտրոնային փոխանակման կենտրոնացված համակարգի մշակման տեխնիկական պայմաններին հավանություն տալու վերաբերյալ

-----  
(Հ. Այվազյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ տվյալների էլեկտրոնային փոխանակման կենտրոնացված համակարգի ստեղծման առաջարկին.

2) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանին՝

ա. մինչև 2012 թվականի սեպտեմբերի 1-ը մշակել տվյալների էլեկտրոնային փոխանակման կենտրոնացված համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը և այն ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ,

բ. տվյալների բազաներում առկա տեղեկատվության փոխանակման կարգի ներկայացման ժամկետը մինչև 2012 թվականի հոկտեմբերի 1-ը երկարաձգելու նպատակով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ վարչապետի 2011 թվականի N 830-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ առաջարկություն:

3. ՀՀ աշխատանքի պետական տեսչության ստուգաթերթի նախագծին և կիրարկումն ապահովող անհրաժեշտ միջոցառումներին հավանություն տալու վերաբերյալ

-----  
(Վ. Դաբաղյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ ՀՀ աշխատանքի պետական տեսչության ստուգաթերթի նախագծին և կիրարկումն ապահովող անհրաժեշտ միջոցառումներին.

2) հանձնարարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Գրիգորյանին՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի առաջարկությանը համապատասխան ստուգաթերթիկներում առանձին սյունակով արտացոլել ստուգման անցկացման մեթոդը.

3) ընդունել ի գիտություն, որ՝

ա. բոլոր ստուգաթերթերի նախագծերը, մինչև դրանց հաստատումը, պետք է փորձարկվեն Տեսչական բարեփոխումների խորհրդի քարտուղարության հետ համատեղ.

բ. փորձարկումներն ու ստուգումներն առաջին հերթին իրականացվելու են պետական մարմիններում.

4) ստուգաթերթերի միջոցով ստուգումներ իրականացնող ՀԳՄ-ների ղեկավարներին՝ ստուգաթերթերին զուգահեռ մշակել ստուգաթերթերի կիրառման ուղեցույցեր.

5) ՀԳՄ-ների ղեկավարներին՝ մշակել և պաշտոնական կայք-էջերում հրապարակել այն փաստաթղթերի օրինակելի ձևերը, որոնց առկայությունը տնտեսավարող սուբյեկտների մոտ հանդիսանում են իրենց ոլորտներին վերաբերող օրենքների պահանջ:

4. Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերի նախագծերին (թվով 9 հատ) հավանություն տալու և փորձարկման փուլն սկսելու վերաբերյալ

-----  
(Հ. Քաղկեցյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերի նախագծերի փորձարկման փուլն սկսելուն.

2) հանձնարարել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա. Երիցյանին՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի առաջարկությանը համապատասխան ստուգաթերթիկներում առանձին սյունակով արտացոլել ստուգման անցկացման մեթոդը.

3) փորձարկման փուլն սկսել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության շենքերից: